



Դասերին հաճախելը կարևոր է

Օգոստոս, 2019

Հարգելի ծնող կամ խնամակալ,

Կալիֆորնիայում մեծ թվով աշակերտներ, որոնց դպրոցական հաճախումները կամ վատ վարքագիծը վատ է, դուրս են մնում դպրոցից: Այդ պատճառով, հաճախումների բարելավումը Գլենդեյլի հանրային դպրոցների ուսումնական խորհրդի առաջնակարգ խնդիրն է: Մենք ձեր օգնության կարիքն ունենք: Կարևոր է, որ ծնողները և խնամակալները հասկանան իրենց դերը աշակերտների կանոնավոր կերպով և ժամանակին դպրոց հաճախելու հարցում:

Ըստ Կալիֆորնիայի կրթական վարչության, աշակերտը «խրոնիկ բացակայող» է համարվում, երբ ամիսը երկու կամ ավելի օր բացակայում է: Միգուցե այդ երկու օրը շատ չի թվում, բայց գումարվելով՝ դրանք շատանում են: Դպրոցական տաս ամսվա ընթացքում, այն դառնում է 20 օր, այսինքն մի ամբողջ ամիս: Նույնիսկ, ամսական երկու օր բացակայելով, ձեր երեխան կարող է մյուս աշակերտներից ետ մնալ: Մանկապարտեզի և առաջին դասարանի խրոնիկ բացակայող աշակերտները, մեծ հավանականությամբ, երրորդ դասարանում կարդալ չեն կարողանա: Վեցերորդ դասարանում խրոնիկ բացակայող աշակերտները կարող են դուրս մնալ դպրոցից: Իններորդ դասարանում, լավ հաճախումներն ավելի լավ կարող են հուշել աշակերտի շրջանավարտումը քան ութերորդ դասարանի գնահատականները: Ակնհայտորեն, *կանոնավոր կերպով դպրոց հաճախելը կարևոր է:*

Ամեն օր ժամանակին դպրոց գնալն ևս կարևոր է: Աշակերտը պետք է իր տեղում և աշխատանքի համար պատրաստ լինի յուրաքանչյուր դասաժամի սկզբում: Եթե աշակերտը դասից ուշանում է 30 րոպե կամ ավել, երեք տարբեր օրերին, ապա նրա մոտ գրանցվում է բացակայություն մեկ ամբողջ օրվա համար (օրինակ՝ 3 անգամ 30 րոպե և ավել ուշանալը = 1 բացակայության):

Երբեմն երեխաները հիվանդանում են և պետք է տանը մնան: Ծնողները/խնամակալները, տարվա մեջ, յոթ անգամ կարող են իրենց երեխայի հիվանդության պատճառով բացակայությունը հարգելի դարձնել առանց բժշկի երկտողի: 8-րդ անգամից սկսյալ, հիվանդության պատճառով բացակայությունը հարգելի դարձնելու համար, պետք է բժշկի երկտող ներկայացնել: Ծնողները/խնամակալները երեք օրվա ընթացքում պետք է զանգահարեն դպրոց իրենց երեխայի բացակայությունը հարգելի դարձնելու համար:

Կան շատ գործոններ, որոնք նպաստում են դպրոցում ունեցած հաջողություններին, սակայն կանոնավոր դպրոց հաճախելն ամենակարևորն է, որպեսզի աշակերտներն ավարտեն դպրոցը: Մենք ցանկանում ենք օգնել ձեզ, եթե որևէ խնդիր ունեք, որի հետևանքով ձեր երեխան դպրոց չի հաճախում: Գլենդեյլի հանրային դպրոցների

կրթաշրջանը ողջունում է ազատ և արդյունավետ շփումը. այն է՝ հանդիպումներ դպրոցի ղեկավարության, ուսուցիչների, խորհրդատուների, ինչպես նաև *Parent Connect*-ի միջոցով: Միասին գործելով՝ մենք յուրաքանչյուր աշակերտի և ընտանիքի համար կարող ենք ճիշտ լուծում գտնել և վստահանալ, որ ձեր երեխան դպրոց է հաճախում և սովորելու հնարավորություն է ստացել: Ձեր երեխայի կրթությունը կարևոր է մեզ համար:

Եթե որևէ հարց, մեկնաբանություն կամ մտահոգություն ունեք, խնդրվում է դիմել ձեր դպրոցի ղեկավարությանը: Նրանք կկարողանան օգնել ձեզ դպրոց հաճախելու հետ կապված ցանկացած հարցում:

Հարգանքներով՝



Դկտ. Այլին Մազհան

Փոխտնօրեն, Երեխայի խնամատարություն և հաճախումներ